ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԹԵ ԴԻԼԵՏԱՆՏԻԶՄ

Ա. Վ. ՔՈՍՅԱՆ

Վաղուց արդեն հեռավոր անցյալի հուշ են այն երանելի ժամանակները, երբ բնատուր միջոցների ունակություններով օժտված առանձին անհատ հանրագիտակներ վստահորեն առաջ էին մղում գիտության շեռնաս պաղաբույն մեքենան։ Արդի գիտության շեշտակի առաջընթացը ստիպեցնող խոշոր հայտնագործությունները տեղ առնում էին, իսկ գիտական բացահայտումներ չուներ պիտական հզոր հովանավորություն։ Փիլիսոփան միաժամանակ պատմաբան էր, բնագետ, մաթեմատիկոս, աստղագետ և աբստրակտագետ։ Գիտական ինֆորմացիայի աճի, նոր մեթոդների ու շատ այլ գործոնների շնորհիվ գիտության բոլոր բնագավառները տարեցտարի ընթանում են նեղ մասնագիտացման ուղիով։ Այսօր հազիվ թե գտնվի մի բնագետ, պատմաբան կամ ֆիզիկոս, որն ի վիճակի լինի հավասարապես զբաղվելու գիտության նշված բնագավառների առանձին ճյուղերի ողջ համալիրով։ Թվում է, թե սա պարզ ու հասկանալի է յուրաքանչյուր քաղաքացիի մարդու, հատկապես գիտնականին։ Բայց իրո՞ք այդպես է։ Պարզվում է, որ ոմանց համար գոյություն ունեն այլ չափանիշներ։

Մեր հանրապետությունում դժվար թե գտնվի մեկը, ով գոնե լսած չլինի վերջին երկու—երեք տասնամյակներում գիտահանրամատչելի և հանրամատչելի մամուլում, ռադիո և հեռուստահաղորդումներում արծարծվող «վեճի» առարկա «Ուրարտու—Հայաստան», «հնդեվրոպական նախահայրենիք» և հարակից այլ հարցերի մասին։ Թե ինչու է վեճ բառը չակերտների մեջ առնված, կխոսվի հետո, իսկ այժմ փորձենք ներկայացնել «ուրարտամերժների» դիրքորոշումը։

Նրանք, բոլորն անխտիր, Հին Արևելքի մասին գիտությունից (ասսուրագիտություն) հեռու կանգնած անձինք են, սակայն «մասնագիտական բանավեճերում» և իրենց նկրտումներում ինքնավստահ են ու անզիջում։ Վերը նշված հարցերի կապակցությամբ որդեգրելով մի ակնհայտորեն հակագիտական տեսություն, որին հասել են նույնքան հակագիտական մեթոդներով, նրանք այնուհանդերձ, տարեցտարի ավելի ու ավելի մոլեգին հարձակումներ են գործում ակադեմիական մի շարք ինստիտուտներում աշխատող հայ մասնագետների վրա, վերջիններիս մեղադրելով ոչ միայն «անգիտության», այլև ինչ-որ «հանցավոր մտայնության» մեջ։ Տվյալ գիտության հետ ոչ մի առնչություն չունեցող այս մարդիկ հայ ժողովրդի հնագույն պատմության, մասնավորապես, կազմավորման վերաբերյալ իրենց «տեսությունը» փորձում են պարտադրել ուրիշներին և հատկապես ստիպել ակադեմիական գիտնականներին ընդունել այն կամ գոնե այլևս չզբաղվել նման հարցերով։ Այդ հեղինակներն անտեսում են այն ակնհայտ փաստը, որ հայ ակադեմիական գիտությունը միջազգային գիտության անբաժանելի մասն է, և փնովելով հայ գիտնականներին, նրանք մարտահրավեր են նետում ժամանակակից օտարերկրյա բազմաթիվ նշանավոր գիտնականներին։ Խիստ բնորոշ է, որ վերջիններիս մասին նրանց գրվածքներում ակնարկ անգամ չկա. գուցե պատճառն այն է, որ օտար հեղինակներին ընթերցելու համար օտար լեզուների իմացություն է պետք։

Սույն հոդվածի նպատակը չէ հանգամանորեն վերլուծել ժամանակակից «ուրարտամերժների» բոլոր փաստարկները և եզրակացությունները, այլ՝ հնարավորին չափ համառոտակի ներկայացնել նրանց վերին աստիճանի մակերեսային պատկերացումները խնդրո առարկա հարցերի վերաբերյալ, ինչպես նաև հետազոտական պարզունակ մեթոդները։

Թերևս ավելի լավ է խոսքը տանք ամենահամառ «ուրարտամերժ», պրոֆ. Ռ. Իշխանյանին. «Սակայն ամենահանգամանալից, ամենամանրակրկիտ ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այս լեռնաշխարհում (Հայկական—Ա. Ք.) ինչ-որ Չհայաստան-Ուրարտուի գոյությունը բացարձակորեն անհիմն է, ուստ, ոչ մի փաստով, ոչ մի վկայությամբ այն չի հաստատվում։ Տարբեր հեղինակների կողմից բերվել են բազմաթիվ փաստեր ու փաստարկներ այն մասին, որ հայոց լեզուն և հայերը բնիկ են այս լեռնաշխարհում, որ աքքադերեն Ուրարտու կոչվող երկիրն ու պետությունը Արարատի հայոց թագավորությունն է, ժողովուրդն ու թագավորները՝ հայեր։ Մեր ուրարտասերները կամ ուրարտամոլները բերված որևէ փաստին կամ փաստարկին չեն պատասխանում, իրենք էլ հօգուտ իրենց եկվորաուրարտական տեսակետի ոչ մի փաստ ու փաստարկ չեն բերում, բայց համառորեն շարունակում են Հայաստանի ակադեմիայի պիտակով գրքեր ու հոդվածներ լույս ընծայել Չհայաստան-Ուրարտուի մասին»[1]։

Հայ ժողովրդի պատմության հնագույն շրջանի և, ընդհանրապես, Հին Արևելքի պատմության մասնագետների հասցեին թույլ տրված բազմաթիվ անհիմն ու վիրավորական մեղադրանքներով ողողված ուրարտաժխտական նմանօրինակ հայտարարություններ կարելի է գտնել Ռ. Իշխանյանի մյուս հոդվածներում ու մի քանի գրքույկներում։

Ինչո՞ւմն է բանը, մի՞թե հայ գիտնականները Ուրարտուի գոյությունն ընդունել և ընդունում են լոկ «տարբեր կողմերից փչող հովերին ենթարկվելով» և նրանք «իրենց աշխատություններում ու դասագրքերում գրում էին ոչ թե այն, ինչ իրոք տեղի է ունեցել հեռավոր ու մոտ անցյալում, այլ այն, ինչ հրահանգվել է դերադասից, ինչ հաճելի է եղել տարբեր ժամանակ ղեկավար պաշտոններ զբաղեցրած անձանց»[2]։

Ենթադրենք մի պահ, թե հայ գիտնականները վերջին 70 տարում գործել են Կենտրոնի հրահանգներով և օտարել են հայ ժողովրդի «պատմության ամենահայկական հատվածը», սակայն, կարծում եմ, հազիվ թե Կենտրոնի ամենահայ ձեռքը կարողանար ստիպել միջազգային սեպագրագիտության բոլոր ներկայացուցիչներին արդեն հարյուր տարի շարունակ ընդունելու Ուրարտուի գոյությունը։ Ի դեպ, Ուրարտուի լինել-չլինելու հարցը արտասահմանյան գիտական շրջանակներում վաղուց ի վեր լուծված է (թվենք առավել հայտնի մասնագետներին՝ Ֆ. Լեման-Հաուպտ, Վ. Քլոնիդ, Յ. Ֆրիդրիխ, Մ. Սալվինի, Հ. Հաուպտման, Գ. Վիլհելմ, Վ. Կլայս և այլք)։

Դժվար է ենթադրել, որ Իշխանյանը իսկապես համոզված է խորհրդային-միջազգային-հայ ակադեմիական դիտության «հակահայկական» դիրքորոշման մեջ, առավել ևս, որ գիտնականների նշված ստվար բանակը երբ՛ ոչ հայ ժողովրդին Հայկական լեռնաշխարհում օտար չի համարել և չի համարում։ Չեմ ենթադրում նաև, որ Իշխանյանը, մեղադրելով Հին Արևելքի մասնագետներին, ինչ-որ թաքնված անձնական շահեր է հետապնդում։ Սակայն այդ դեպքում ինչո՞ւ է նա այդքան համառորեն ջանքեր գործադրում վարկաբեկելու «Ուրարտուն հայկական պետություն չհամարող» ժամանակակից հայ գիտնականներին։

Գուցե Իշխանյանը մշակել է գիտությանն առայժմ անհայտ ինչ-որ գիտական մեթոդ կամ նա անհամեմատ ավելի մեծ ինֆորմացիա ունի սեպագրական քաղաքակրթությունների պատմության վերաբերյալ։ Հայ ակադե-

---

1 «Հայաստանի Հանրապետություն», 17 մայիսի 1991։

2 «Գիտներ կանչ», 11 օգոստոսի 1989։

միական մասնագետների համար Իշխանյանի այդպիսի «առավելության» բացակայությունը դիտական շրջանակներին ի սկզբանե պարզ է եղել, սակայն այնուամենայնիվ փորձենք ակնառու փաստերով ներկայացնել իրականությունը։

Ռ. Իշխանյանի դրվածքների հետ ծանոթությունը վկայում է որևէ նոր մեթոդի կամ հավելյալ ինֆորմացիայի բացակայության մասին։ Նրա կողմից օգտագործված բոլոր նյութերը գիտությանը վաղուց հայտնի, համարյա դասագրքային ճշմարտություններ են, միայն թե դրանց համադրումը զարմանալի կերպով մասնագիտական կարծիքներին հակառակ արդյունքների է հասցնում։ Թվում է, թե մինչև Իշխանյանը ողջ գիտական աշխարհում չի գտնվել մեկը, ով ի վիճակի կլիներ, օգտագործելով բոլոր հայտնի տվյալները, հայտարարելու «Ուրարտուի՝ Հայկական պետություն լինելու ակնառու փաստը»։

Ինչ վերաբերում է հեղինակի դրվածքների աշխատանքային մեթոդին, ապա կարելի է միանշանակ ասել հետևյալը. ա) սկզբնաղբյուրների և մասնագիտական գրականության, մեղմ ասած, խիստ մակերեսային ծանոթություն, բ) մասնագիտական հրատարակություններում տեղ գտած կարծիքների և վարկածների կամայական ընտրություն և խեղաթյուրում, գ) նեղ մասնագիտական նյութին ու գրականությանը բացարձակապես անծանոթ «մասնագետների» պրպտումների վկայակոչում և այլն։

Ռ. Իշխանյանի գրելաոճի վերոհիշյալ բնութագիրը ցայտուն կերպով ի հայտ է դալիս նրա ուրարտամերժության գլխավոր կռվանի՝ հնդեվրոպական նախահայրենիքի հարցի կապակցությամբ։ Լսենք նրան. «1984 թ. Թիֆլիսում լույս տեսավ Թ. Գամկրելիձեի և Վյաչ. Իվանովի «Հնդեվրոպական լեզուն և հնդեվրոպացիները» ռուսերեն հիմնակազմ աշխատությունը, որի մեջ բաղում փաստերով, ուղղակի մաթեմատիկորեն հեղինակները ապացուցում են, որ հնդեվրոպական նախահայրենիքը գտնվել է Հայկական լեռնաշխարհում և որ հայոց լեզուն ու հայերը ծագել են այստեղ, այսինքն՝ բնիկ են»[3]։ Կամ. «Զարմանալի է. չէ՞ որ շատ հեղինակներ, այդ թվում՝ խորհրդային վերը հիշված ականավոր լեզվաբանները, ցույց են տվել, որ հնդեվրոպական նախալեզվի տրոհումը կատարվել է մ. թ. ա. IV հազարամյակում, երբ մայր լեզվից անջատվել է նաև հայերենը, որ նշանակում է, թե այդ ժամանակներից էլ, այսինքն՝ մեզնից ավելի քան հինգ հազար տարի առաջ, սկսվել է հայոց ինքնուրույն պատմությունը»[4]։

Գործից անտեղյակ ընթերցողը հազիվ թե մտադրվի ստուգելու խորհրդային ականավոր լեզվաբանների գրքից հղված տեսակետը և, բնականաբար, զայրանում է «ուրարտամոլ գիտնականների» դիրքորոշման վրա։ Այնինչ Ռ. Իշխանյանը «մոռացել է» հղել նույն գրքի մեկ այլ հատված, որը ամեն ինչ իր տեղն է դնում։ «Դրա լույսի ներքո (խոսքը նախալեզվի առանձին բարբառների կրողների տեղաշարժերի մասին է—Ա.Ք.) ակնհայտ է դառնում էթնիկական առումով «հին հնդեվրոպացիներ», «արիացիներ» և այլ տերմինների պայմանականությունը։ Ամեն անգամ այդպիսի տերմինների տակ պետք է հասկանալ ոչ թե էթնիկական առանձնահատուկ բնութագիր ունեցող մարդկանց ինչ-որ էթնիկապես հոծ և միատարր զանգված, այլ համապատասխանաբար նախահնդեվրոպական, արիական և այլ բարբառներով խոսող ցեղերի պայմանական անվանում։ Սույն աշխատության մեջ «հնդեվրոպացիներ», «արիացիներ» և մյուս տերմինները միայն այդ հատուկ նշանակությամբ են կիրառվում»[5]։

---

[3] «Երեկոյան Երևան», 26 նոյեմբերի 1988։

[4] Նույն տեղում։

[5] Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы. Т. 2, Тбилиси, 1984, с. 887.

Կարծում եմ, ամեն ինչ պարզ է, սակայն համենայն դեպս արժե փոքրինչ հստակեցնել սույն հեղինակների միտքը։ Նախալեզվի տրոհմանը անմիջապես հաջորդող շրջանում հնդեվրոպական առանձին բարբառները կրող ցեղերը խարխուլ էթնիկական միավորներ էին, որոնք դեռևս գտնվում էին զարգացման մինչպետական շրջանում։ Ի՞նչ հայոց ինքնուրույն պատմության մասին է խոսքը նախալեզվի տրոհումից անմիջապես հետո։

«Եթե հնդեվրոպական նախահայրենիքը եղել է Հայկական լեռնաշխարհում կամ այդ լեռնաշխարհը մասն է կազմել նախահայրենիքի, ապա մ. թ. ա. IV հազարամյակում հնդեվրոպական ամբողջության տրոհումից հետո, հաջորդ հազարամյակում Փոքր Ասիայում ու արևելքից նրան կից տարածքում իշխող տարրը եղել են հնդեվրոպական ցեղերը և, բնականաբար, դա վերաբերում է նաև Հայկական բարձրավանդակին... Այդ. ինչպե՞ս կարող էր մ. թ. ա. II հազարամյակում և I-ի սկզբներում Լեռնաշխարհի նույն տարածքը բնակեցված լինել ոչ-հնդեվրոպացիներով (խուռի-ուրարտացիներ), որոնք էլ իբր կազմել են իրենց պետությունը այդ տարածքում։ Ո՞ւր անհետացան հնդեվրոպական, մասնավորապես հայկական ցեղերը, որոնք, ըստ այդ տեսակետի, մ. թ. ա. VI հարյուրամյակում, չգիտես ինչու, նորից պետք է հայտնվեին նույն տարածքում և զբաղեցնեին ամբողջ Հայկական լեռնաշխարհը՝ խուռի-ուրարտացի կոչվածների արդեն լիակատար բացակայությամբ»[6]։

Այս բազմաստիճան անտրամաբանական կառույցը մի յուրատեսակ հուզական շղարշ է, որի նպատակը ընթերցողին ապակողմնորոշելն է, քանզի դրա աստիճանները խարխուլ են, եթե ոչ բացարձակապես հիմնազուրկ։

Իշխանյանը արդեն մոռացել է նախալեզվի տրոհման անմիջական հետեվանքի մասին, այսինքն, որ բազմաթիվ հնդեվրոպական ցեղեր (խեթալուվիական, բալկանյան, թոխարյան, մասնավորապես նաև հնդիրանական և այլն) մ. թ. ա. IV—III հազարամյակների ընթացքում հաջորդաբար լքել են իրենց նախահայրենիքը։ Եթե այդպես է, ապա ազատված տարածքների գոնե մի մասը կարող էր բնակեցվել նաև այլ ժողովուրդներով, տվյալ դեպքում՝ խուրրի-ուրարտական կոչվող էթնիկական տարրով, որը հաստատուն կերպով (հատկապես գրավոր աղբյուրներով) վկայված է Հյուսիսային Միջագետքում արդեն մ. թ. ա. XXIII դարում։

Ինչ վերաբերում է նախահայրենիքի տարածքում հին հայկական տարրի խաղացած դերին, ապա գուցե վկայակոչենք նաև հիշյալ գիտնականների կարծիքը. «...Նախահայերը պետք է իրենց այդ անվանումը (խոսքը «հայ» էթնոնիմի մասին է—Ա. Ք.) փոխ առնեին Առաջավոր Ասիայի արևմտյան շրջաններում, ավելի ուշ տեղաշարժվեին արևելյան ուղղությամբ դեպի Հայկական լեռնաշխարհում գտնվող իրենց պատմական բնակության տարածքը և շերտագրվեին այստեղ ավելի վաղ հիմնավորված խուրրի-ուրարտական էթնիկական տարրի վրա»[7]։ Բացի այդ, երևի անհրաժեշտ է վկայակոչել քննարկվող գրքի 956 էջին կցված գունավոր քարտեզը, որտեղ ավելի քան պարզ տրված է և՛ հնդեվրոպական նախալեզվի տարածքը նախքան տեղաշարժերը (Վանա լճից հյուսիս), և՛ նրանից հարավ խուրրի-ուրարտական ցեղերի բնակության վայրը (Վանա և Ուրմիա լճերի միջև ընկած շրջանում և Հյուսիսային Միջագետքում)։

Ակնհայտ է, որ Ռ. Իշխանյանի «տեսությունը» «տուժում է» Հայկական լեռնաշխարհի ինչ-որ մի մասում ոչ-հնդեվրոպացի էթնիկական տարրի գոյության մասին հիշյալ հեղինակների կարծիքից, և նա փորձում է այն հերքել վերջիններիս կարծեցյալ նահանջի մասին հայտարարությամբ. «Հակասությունն ակնհայտ է. մի կողմից Հայկական լեռնաշխարհը համարում են

[6] Ռ. Իշխանյան. Հայ ժողովրդի ծագման և հնագույն պատմության հարցեր. Երևան, 1988, էջ 103—104։

[7] Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов. Նշվ. աշխ., էջ 913, ծան. 3։

հնդեվրոպական նախահայրենիք, մյուս կողմից այդ տարածքի նախնական բնակիչ են համարում ոչ-հնդեվրոպացի «խուռի-ուրարտացի» անվանյալներին»[8]։

Ոչ մի նահանջ տեղի չի ունեցել։ Ի գիտություն Իշխանյանի, սույն հեղինակները և նրանց կողմնակիցները (առավել ևս հակառակորդները) այն կարծիքին չեն, թե հնդեվրոպական նախահայրենիքը մ. թ. ա. IV—III հազարամյակներում զբաղեցնում էր ողջ Հայկական լեռնաշխարհը և հարակից տարածքները։ Հնդեվրոպական նախահայրենիքի զբաղեցրած ենթադրյալ տարածքում հայալեզու ցեղերով բնակեցված շրջանը, հաշվի առնելով հնդեվրոպական լեզուների (համապատասխանաբար՝ ցեղերի) խիստ մեծ թիվը, պետք է որ շատ սահմանափակ լիներ, որից էլ կարելի է եզրակացնել հետևյալը. հայալեզու ցեղերը ի վիճակի չէին տրոհումից նույնիսկ մի քանի հարյուրամյակ անց բնակեցնել Հայկական լեռնաշխարհի մեծ մասը։

Այնպես որ, «ո՞ւր անհետացան հնդեվրոպական, մասնավորապես հայկական ցեղերը» արտահայտությունը սոսկ հռետորական հնարք կարելի է համարել։

Ռ. Իշխանյանի գրքից բերված վերոհիշյալ ընդարձակ հատվածի առաջին մասում նկատելի է զուտ թվաբանական թերացում։ Հեղինակը հայտարարում է, որ մ. թ. ա. IV—III հազարամյակներում Հայկական բարձրավանդակը եղել է հնդեվրոպական, իսկ այդ դեպքում հնարավոր չէր, որ մ. թ. ա. II—I հազարամյակներում այստեղ, նույն տարածքում ապրեին ոչ-հնդեվրոպացիներ։

Բայց չէ՞ որ մ. թ. ա. III և II հազարամյակները իրար չեն համընկնում, եթե III-ում ապրել է մի էթնիկական տարր, ապա մյուսում կարող էր այդ տարածքի մի մասում հաստատվել մի այլ տարր. ի վերջո, Հայկական լեռնաշխարհը «չինական պարսպով» չէր պատված։ Կամ մի՞թե Թ. Գամկրելիձեն և Վյաչ. Իվանովը այն կարծիքին են, որ մ. թ. ա. II և I հազարամյակներում «լեռնաշխարհի նույն տարածքը բնակեցված էր ոչ-հնդեվրոպացիներով»։ Ո՞չ մ. թ. ա. II հազարամյակում, ո՛չ էլ նույնիսկ Ուրարտուի գոյության շրջանում Հայկական լեռնաշխարհի «նույն տարածքը» (այսինքն՝ մեծ մասը) բնակեցված չի եղել ոչ-հնդեվրոպացի ուրարտներով. Այդ տարածքը նվաճումների շնորհիվ բռնի ուժով մտցվել է Ուրարտուի կազմի մեջ, բայց միայն այդքան։

Նույնքան պարզունակ է նաև վերը բերված հատվածի երկրորդ մասը, որտեղ խոսվում է մ. թ. ա. VI դարում Հայկական լեռնաշխարհում խուրրի-ուրարտացիների յիակատար բացակայության մասին։ Հետաքրքիր է, թե ո՞ր աղբյուրների հիման վրա է այդպիսի եզրակացություն արվել։ Եթե նա նկատի ունի Դարեհ I-ի Բեհիսթունի արձանագրությունը, որտեղ խոսվում է Հայկական պետության (տեքստում՝ Արմինա) ապստամբության մասին, ապա զարմանալի կլիներ, եթե Դարեհը հիշատակեր դրանից մի քանի տասնամյակ առաջ պետականությունը կորցրած և, ամենայն հավանականությամբ, մարական, սկյութական և բաբելոնյան արշավանքների ընթացքում զգալի մարդկային կորուստներ տված ուրարտների մասին։ Դարեհն այստեղ թվարկում է միայն ապստամբած պետություններն ու ժողովուրդներին, այլ ոչ թե ներկայացնում է ողջ Մերձավոր և Միջին Արևելքի էթնիկական քարտեզը։

Յուրաքանչյուր գիտական տեսություն (տվյալ դեպքում հնդեվրոպացիների առաջավորասիական նախահայրենիքի մասին վարկածը) տեսություն է միայն իր բաղադրատարրերի ամբողջության մեջ, այլապես այն կվերածվի մերկապարանոց հայտարարությունների մի շղթայի։ Եթե վերոհիշյալ հեղինակները անվերապահորեն ընդունում են խուրրի-ուրարտների գոյությունը Հայկական լեռնաշխարհի որոշ շրջաններում, ուրեմն դրա համար բավա-

8 Ռ. Իշխանյան. նշվ. աշխ., էջ 31, ծան. 2։

րար հիմքեր կան։ Վերցնել այդ տեսությունից միայն մեկ-երկու «հարմար» օղակ և ժխտել մնացածը, առնվազն պարզունակություն է, եթե ոչ ավելին։

Հնդեվրոպական նախահայրենիքի մերձավորարևելյան տեղադրության և հայ ժողովրդի տեղաբնիկության հարցին դեռ կանդրադառնանք, իսկ հիմա անհրաժեշտ ենք համարում խոսել հայ պատմաբանների, լեզվաբանների և հնագետների հասցեին ուղղված մեղադրանքների մասին. «Մեր պատմաբան ակադեմիկոսներն ու պրոֆեսորները գրում էին, որ հայոց լեզուն և հայերն այս լեռնաշխարհում եկվոր են, որ հայոց լեզուն ու հայերը մի շարք լեզուների ու ցեղերի խառնուրդից են գոյացել, համառորեն գրում էին ու հիմա էլ գրում են, որ մինչև Ք. ա. VI դարը հայ ժողովուրդ ու հայկական պետություն չի եղել, համառորեն պնդում են, որ Հայկական բարձրավանդակում աքքադերեն Արմանի և Ուրարտու, Հայասա անուններով հայտնի երկրներն ու պետությունները հայկական չեն եղել...»[9]։ Այս և նման բազմաթիվ հայտարարությունները բնորոշ են Իշխանյանի բոլոր գրվածքներին, և հայ ակադեմիական ու ոչ ակադեմիական մասնագետները վերջին ժամանակները համարյա ուշադրություն չեն դարձնում դրանց վրա։ Սակայն անվերջ հարձակումները հղի են ընթերցասեր հասարակայնության (մասնավորապես, երիտասարդության) գիտակցության և հոգեբանության մեջ անառողջ մտայնություն սերմանելու վտանգով։ Իշխանյանի և այլոց «ստեղծագործությունների» ոճը ընթերցողին ստիպում է ենթադրել մեր ժողովրդի հոգսերին ու նպատակներին խորթ, դրսից կառավարվող պատմաբանների, լեզվաբանների ու հնագետների աղանդավոր, ինչ-որ ներփակ խմբի գոյության մասին։ Ուստի անհրաժեշտ է բացել փակագծերը և ընթերցողին համառոտակի ներկայացնել հայ գիտության վերաբերմունքը հայ ժողովրդի կազմավորման հարցերի վերաբերյալ, քանի որ, դժբախտաբար, գիտական աշխատությունների մեծ մասը, ինչպես նախկինում, այնպես էլ այսօր, հրատարակվում է միայն փոքր տպաքանակներով կամ նեղ մասնագիտական պարբերականներում և ընթերցողին մատուցվել է սիրողական, աղավաղված մակարդակով։ Փորձենք բավարարվել անցյալի և ներկայիս հայ մասնագետների՝ հայ ժողովրդի կազմավորման վերաբերյալ արտահայտած առավել ընդգրկուն և պարզ կարծիքներով։

Այսպես, դեռևս 1940-ական թթ. ականավոր լեզվաբան, ակադ. Գ. Ղափանցյանը գրել է. «Իրականում հայ ժողովուրդը, իսկ ավելի ուշ՝ նաև պետությունը կազմել են Հայասայից եկած hայ-երը (ընդգծումը իմն է— Ա. Ք.), որը և հայերի գիտակցության մեջ պահպանվել է «հայ» ինքնանվան մեջ, որը տեղի է ունեցել Ուրարտուի տեղական ցեղերի, առաջին հերթին Տիգրիսի վերին հոսանքներում գտնվող ուշ շրջանի Արզանենեի Արիմե և Շուպրիա շրջանների կլանաիրիականացած խուրրի-ուրարտների հետ ձուլման միջոցով»[10]։

Գ. Ղափանցյանի վարկածի իմաստը հետևյալն է. հայկական ցեղերը նախապես բնակվել են հետագայի Բարձր Հայք նահանգում և հարակից շրջաններում մ. թ. ա. II հազարամյակում գոյություն ունեցած Հայասա-Ազզի պետության տարածքում։ Մ. թ. ա. XII դարում նրանք աստիճանաբար տեղաշարժվել են դեպի հարավ և արևելք և մի քանի հարյուրամյակ շարունակ (մինչև Ուրարտուի անկումը) տարածվել ողջ Հայկական լեռնաշխարհում, որի ընթացքում իրենց մեջ ձուլել են բազմաթիվ խուրրի-ուրարտական և այլ ցեղերի։

Եթե Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հյուսիս-արևմտյան շրջանները (Հայասա-Ազզի) Իշխանյանը Հայաստան չի համարում, ապա իսկապես Գ. Ղափանցյանը եկվորության կողմնակից է եղել։ Այնինչ այստեղ

---

9 «Հանրապետություն», 1989, № 1։

10 Гр. Капанцян. Хайаса—колыбель армян. Ереван, 1948, с. 169 (այսուհետև՝ Хайаса...).

խոսքը ոչ թե մի ինչ-որ այլ վայրից գալու մասին է, այլ Հայկական լեռնաշխարհի սահմաններում հայալեզու էթնոսի տեղաշարժի մասին (այս վարկածի կողմնակցությամբ հիշենք Թ. Գամկրելիձեի և Վյաչ. Իվանովի վերոհիշյալ կարծիքը հայալեզու ցեղերի տեղաշարժի վերաբերյալ): Իսկ, եթե մ. թ. ա. III—II հազարամյակներում ողջ Հայկական լեռնաշխարհը բնակեցված լիներ միայն հայերով, ապա չեմ կասկածի, եթե ասեմ, որ այսօր Մերձավոր Արևելքում գոյություն կունենար բավականին բնակչությամբ մի երկրորդ Չինաստան (կամ ավելին՝ Հնդկաստան):

«Դեռևս Ուրարտական պետության գոյությունից առաջ Փոքր Հայքի, Բարձր Հայքի, Ծոփքի, Երկրորդ Հայքի կամ Թորգոմա երկրի, Աղձնիքի և Տարոնի մի զգալի մասի բնակիչները հիմնականում հայ, արմեն ցեղեր և այլ անուններ կրող հայկական ցեղեր էին»[11]: «Գրավոր վկայությունները և տեղանունների ստուգաբանությունները ցույց են տալիս, որ հայ ժողովրդի մեջ են ձուլվել, նրա բաղադրիչ մասերը և նախնիներն են հանդիսացել ոչ միայն հնդեվրոպական ծագում ունեցող հայկական ցեղախմբերը, այլև ուրարտական, խուռիական և կովկասյան ծագում ունեցող տեղաբնիկ ցեղախմբերը»[12]։

Մի՞թե վերը բերված ընդարձակ տարածքները Հայկական լեռնաշխարհից դուրս են ընկնում։ Այստեղ էվոլյուցիայի մասին խոսք անգամ չկա։ Սակայն Ռ. Իշխանյանը հակված է ժողովուրդների կազմավորումը դիտելու որպես միաժամանակյա գործողություն (նախալեզու→ցեղախումբ= պատրաստի ժողովուրդ), այլ ոչ թե տևական գործընթաց (հաճախ հազարամյակներ ընդգրկող), ընդ որում, դատելով նրա աշխատանքներից, այդ «պատրաստի ժողովուրդը» անցնում է ինքնուրույն (ավտոնոմ) զարգացման ուղի, իր կրողների քանակական աճն ապահովելով միայն ներքին, անխառն ռեսուրսների հաշվին։ Իհարկե, այսպիսի խարխուլ, գիտության հետ ոչ մի ընդհանուր բան չունեցող դիրքորոշման դեպքում հասկանալի է դառնում Իշխանյանի դժգոհության պատճառը։ Նրա կարծիքով, ժողովուրդների, ազգերի գոյացման ընթացքում նախալեզվից անջատված հայերեն բարբառը կրող ցեղերը չէին կարող շփվել այլալեզու (հնդեվրոպական և ոչ-հնդեվրոպական) ցեղերի հետ, ձուլել նրանց կամ մասնակիորեն ձուլվել նրանց մեջ։ Կարո՞ղ է արդյոք Իշխանյանը մատնանշել ժամանակակից որևէ ազգի, որն իր կազմավորման ընթացքում չի անցել նման ուղի։ Սա բնական և անխուսափելի գործընթաց էր։

Հայ ժողովրդի տեղաբնիկության տեսակետն էր պաշտպանում նաև ակադ. Ս. Ղարիբյանը. «Հայ ժողովուրդը ոչ մի տեղից չի եկել, նա գոյացել է Հայաստանում բազմաթիվ տոհմերից, ցեղերից և ցեղախմբերից, որոնք բնակվել են հին Հայկական բարձրավանդակում անհիշելի ժամանակներից մինչև մ. թ. ա. VI—II դարերը, ինչպես նշում է նաև ակադեմիկոս Մանանդյանը։ Հայ ժողովրդի կազմավորման պրոցեսի ինտենսիվ ժամանակաշրջանն են»[13]։

Կկամենայի հղել նաև երկու հայտնի մասնագետ-սեպագրագետների, որոնք Իշխանյանի և այլոց շնորհիվ այսօր շատերի համար մարմնավորում են հայ ժողովրդի չկամեցողների հավաքական կերպարը։ «...Եվրոպայից կամ էլ Փոքր Ասիայի արևմտյան շրջաններից հայերի Առաջավոր Ասիա գալու տեսությունը բացարձակապես անհիմն է, զուրկ որևէ պատմական հիմնավորումից... Հին Արևելքի պատմության վերաբերյալ նյութերը անուղղակիորեն վկայում են Առաջավոր Ասիայի հետ հայերի ունեցած խոր կապերի մա-

[11] Հայ ժողովրդի պատմություն. Երևան, 1972, էջ 80, (Երևանի պետական համալսարանի հրատարակություն)։

[12] Նույն տեղում, էջ 82։

[13] Ա. Ղ ա ր ի բ յ ա ն. Հին և նոր հայագիտություն.—Աշխատությունների ժողովածու, հ. 1, Երևան, 1946, էջ 65։

սին, բացարձակապես ժխտելով պատմական թատերարանում հայերի՝ մ. թ. ա. VI դարում հանկարծակի հայանվելու տեսակետը, որի վրա էր հենվում միստրոսիան տեսությունը, ուստի սրանք պատմական փաստերի վերականգնելով մի ողջ ժողովրդի դարաստաք»[14]։

«Ես պնդել եմ, որ հայերի կենսաբանական և մշակութային նախնիները, որոնք հին ժամանակներում ստեղծել են խուրրիական և ուրարտական մեծ քաղաքակրթությունները, դեռ հայերեն չէին խոսում, և որ խուրրիական, ուրարտական, արևելաասիական և նախահայկական ժողովուրդների միավորումից կազմավորվեց հայկական միասնական ժողովուրդը, որը բնդունեց ընդհանուր, անխառն հնդեվրոպական հայոց լեզուն և ժառանգեց խուրրիների, ուրարտների և այլոց մշակույթը և սոցիալական մակարդակը»[15]։

Կարիք չկա նոր մեջբերումներ կատարել բոլոր աշխատություններից։ Կարծում եմ այսքանն էլ բավական է, այնպիսի յուրաքանչյուր ոք համոզվի, որ գիտնականների մեծ մասը ընդունում է հայ ժողովրդի՝ Հայկական լեռնաշխարհում կազմավորվելու տեսակետը։ Բայց դուցե մեկ անգամ ևս հղենք Իշխանյանին. «...շատ կարևոր է, ապացուցել վերջապես հայերի ձևավորության ամբողջովին կեղծ, հնարված տեսությունից, ընդունել շատ գիտնականների բերած լատիներեն փաստերով ապացուցված հայերի բնիկ լինելու տեսակետը»[16]։

Հարկ եմ համարում սկզբից ևեթ նշել, որ վերջին տասնամյակներում ոչ Հայաստանում, ոչ էլ դրսում «հայերի եկվորության» տեսակետ գոյություն չունի։ Հայերի և մեծ թվով հնդեվրոպական ժողովուրդների (խեթա-լուվիական, հնդիրանական, թոխարյան և այլն) եկվորության տեսակետ ձևավորվել էր XIX դարում, երբ համեմատական լեզվաբանությունը «նախալեզու» և «նախահայրենիք» տեսությունները ստաց քաշեց։ Եվ քանի որ նոր ժամանակներում ամենից շատ հնդեվրոպական ժողովուրդներ բնակվում էին Եվրոպայում, ապա վաղ շրջանի ուսումնասիրողները համոզված էին, որ այդ «նախահայրենիքը» Եվրոպայում է գտնվել (Կենտրոնական Եվրոպայում, հետո՝ հյուսիսմերձարևելյան շրջանում ու Բալկաններում)։ Այդ տեսակետը գերիշխող է եղել բոլոր մասնագետների մոտ (բնականաբար, նաև հայ), սակայն պետք է խոստովանել, որ ի պատիվ հայ գիտնականների, նրանք, ընդունելով հանդերձ Եվրոպայից փոքրաթիվ հայալեզու տարրի ներթափանցումը Հայկական լեռնաշխարհ, այնուամենայնիվ մեր ժողովրդի կազմավորման բնօրրանը տեսնում էին հենց այստեղ։ Ըստ իս, այս տեսակետը շատ լավ ձևակերպել է Գ. Ղափանցյանը. «Մենք չենք կարող կառչել հախուռն հակադրումից իր բոլոր մասնրամասներում և հետևանքներում՝ կա՛մ տեղաշարժ կա՛մ էլ այն բոլորովին ժխտելով...»[17]։ Մեր անվանի հայագետի կարծիքով, հայ ժողովուրդը (ինչպես և աշխարհի մյուս ժողովուրդները) արդյունք է տեղաբնիկ և եկվոր դեղերի տևական փոխշփումների և փոխազդեցության։ Այս նույն մոտեցումն առկա է նաև մեր օրերում գործող հայ մասնագետների աշխատություններում։

Ռ. Իշխանյանի հոդվածից մեջբերված հատվածը ավելորդ անգամ վկայում է այն մասին, որ լեզվաբանը, դժբախտաբար, պատմության ամենաբարդ և խճողված հարցերը փորձում է լուծել «կամ ...կամ» մեթոդով։ Այս մեթոդի թերություններն ակնհայտ են։ Խնդրո առարկա հարցի բոլոր օղակների համար նա ունի նախապես պատրաստի կաղապարներ, որոնց մեջ դրվում են մտացածին, անհիմն «փաստեր ու փաստարկներ»։ Այսինքն՝ Իշ-

---

[14] Б. Б. Пиотровский. О происхождении армянского народа. Ереван. 1946. с. 36.

[15] И. М. Дьяконов. К праистории армянского языка (о фактах, свидетельствах и логике) — [illegible] журнал, 1983, № 4, с. 177, прим. 86.

[16] «Գիտնական կանչ», 11 օգոստոսի 1989։

[17] Хайаса..., с. 169.

խանյանի մոտ ոչ թե փաստերն են իշխում տեսության վրա, այլ ընդհակառակը, տեսությունը՝ փաստերի վրա։ Եթե մի որևէ փաստ հակադրվում է նրա «տեսությանը», ապա այն կա՞մ արհամարհվում է, կա՞մ էլ, պարզունակ տրամաբանական խաղի օգնությամբ, նույն փաստը վերածվում է նրա «տեսությունը» հաստատող «ևս մեկ ապացույցի»։ Ասվածը հիմնավորելու համար փորձենք վերլուծել Իշխանյանի կողմից առաջ քաշված կարծիքը մ. թ. ա. III հազարամյակում Հայկական պետության գոյության մասին։

Այսպես, Աքքադի արքա Նարամսուենի և Էբլայից գտնված արձանագրություններում հիշատակվում է Armani երկիրը, որը, ըստ Իշխանյանի, հենց Հայաստանն է[18]։ Եվ կարծես իմիջիայլոց նշվում է, թե Նարամսուենը մի քանի անգամ արշավել է դեպի հյուսիս, դրանով իսկ հիմք ստեղծելով Արմանիի և Հայաստանի նույնացման համար։

Իրականում Նարամսուենի արշավանքները հիմնականում ընթացել են հյուսիս-արևմտյան ուղղությամբ՝ դեպի Հյուսիսային Սիրիա, Հյուսիսային Միջագետք և Հարավ-արևելյան Փոքր Ասիա։ Սակայն հարցն այստեղ Նարամսուենի արշավանքների ճշգրիտ ուղղությունը չէ, այլ այն, որ Իշխանյանը հակված է հայկական համարելու յուրաքանչյուր տարածք կամ ժողովուրդ, որը խնկուզ մասնակիորեն առնչվում է ողջ Հայկական լեռնաշխարհի (300 000 քառ. կմ) հետ։ Արմանիի հարցում էլ առկա է նման դիրքորոշումը։ Նրա համար կարևորը ոչ թե Արմանիի իրական տեղադրությունն է, այլ այս երկրանվան մասնակի նմանությունը ավելի ուշ շրջանում վկայված Արսինա—Արմենիայի հետ։ Մեր ժամանակների եվրոպական խոշոր սեպագրագետներին «ոմանք» հորջորջելով, Իշխանյանը, չբերելով գեթ մեկ լուրջ հակափաստարկ, փորձում է ժխտել նրանց կարծիքը վերոհիշյալ Արմանիի՝ Էբլայի մոտակայքում (հավանաբար, Հալեպի շրջանում) գտնվելու մասին[19]։

Մի պահ ենթադրենք, թե այս Արմանին ինչ-որ ձևով առնչվում է Հայկական լեռնաշխարհի հետ, այսինքն՝ դա հայկական պետություն է, սակայն մի՞թե աքքադական և էբլայական արձանագրությունների նյութը թույլ է տալիս հայտարարելու, որ Արմանի-Հայաստանը զբաղեցնում էր Հայկական լեռնաշխարհի զգալի մասը[20]։ Նույն աշխատության՝ Արմանիին վերաբերող մասում հայտարարվում է, թե Նարամսուենի հիշատակած Armani-ն Արմենիան է՝ Հայաստանը կամ ավելի ճիշտ՝ նրա հարավային մասը[21]։

Իշխանյանի՝ Արմինա-Հայաստան «տեսությունը» ունի յուրովի փաստարկում, որը արժե հատուկ քննարկել։ Նարամսուենը հիշատակում է Արմանիի երկու թագավորների՝ Ռեդ-Ադադ և Մադակինա։ Նախ ոչ թե Ռեդ, այլ Ռիշ։ Ըստ Իշխանյանի, Ռեդ-Ադադ անվան սեմական բնույթի հիման վրա նրա կրողի հայ չլինելու մասին կարծիքը «միամիտ դատողություն է»[22], իսկ Մադակինան «միայն հայերեն է ստուգաբանվում»[23]։

Առաջին դեպքում գործ ունենալով սեմական անվան հետ, Իշխանյանի «մեթոդը» իսկույն մտաբերում է հինարևելյան գրավոր աղբյուրներում տեղանունների և անձնանունների խիստ հազվադեպ թարգմանությունների պրակտիկան, բայց երբ հասնում է առայժմ լեզվաբանների ուշադրությունից վրիպած Մադակինային, ապա անմիջապես այն հայտարարում է «զուտ հայկական»։ Սակայն երևի նա ինքն էլ համոզված չէ Ռեդ-Ադադի՝ հայերե-

---

18 Հայ ժողովրդի ծագման ..., էջ 43—44։

19 П. Гарелли. Замечания по топонимике из архивов Эблы—В сб.: Древняя Эбла, М., 1985, с. 285—286.

20 Հայ ժողովրդի ծագման ..., էջ 104։

21 Նույն տեղում, էջ 44։

22 Նույն տեղում..., էջ 46։

23 «Երեկոյան Երևան», 26 նոյեմբերի 1988։

նից թարգմանված լինելու մեջ և այդ պատճառով մի լրացուցիչ մեկնություն է տալիս այդ անձնանվանը, այս անգամ ստուգաբանության առարկա դարձնելով դրա հնացած Ռեղ-Թեշուր տարբերությունը. «Ապա՝ Ռեղ-Թեշուր անվան երկրորդ բաղադրիչը՝ Թեշուր-ը հայկական ստեղծության անուն է, որ Թըշիր կամ Թրշիկ ձևով պահպանվել է նաև հայ ժողովրդական երգերում»[24]։

Նախ և առաջ, հիմա ո՞ր ձևն է հիշտը՝ Ռեշ-Ադադ թե՞ Ռեշ-Թեշուրը։ Եթե Թեշուր բաղադրիչը հայկական է, այդ դեպքում Ռեշ բաղադրիչն ի՞նչ է նշանակում։ Ասել է, թե ինչպես էլ որ ընթերցվելիս լինի, միևնույն է, կարող եմ հայերեն ստուգաբանել։ Սակայն ոչ այնքան կարևոր է վերոհիշյալ անձնանվան ստուգաբանությունը, որքան դրա «նպատակահարմարությունը»։ Դուցե ինչ-որ տեղ համոզիչ հնչեր Թեշուրի՝ հայկական ծագման մասին վարկածը, եթե այն այլևս ոչ մի տեղ վկայված չլիներ։ Իսկ փաստերն անդրդվելիորեն հակադրվում են իշխանյանական վարկածին։ Հին Արևելքի ցանկացած մասնագետ կասի, որ Թեշուրը (ուրարտ. Թեյշեբան) խուրրիական դիցարանի գերագույն աստվածն էր, որի պաշտամունքը լայնորեն տարածված էր խուրրի-ուրարտական էթնոսի դրաղեցրած ընդարձակ տարածքում և նույնիսկ դրանից դուրս։ Հինարևելյան գրավոր աղբյուրներում վկայված են Թեշուր բաղադրիչով ահռելի քանակությամբ խուրրիական անձնանուններ։ Կարելի է միայն մի խորհուրդ տալ. եթե Թեշուրը հայկական աստված էր, ապա անհրաժեշտ է հատուկ նշել, որ մ. թ. ա. II—I հազարամյակներում Հին Արևելքի շատ երկրներ ու ժողովուրդներ (Հյուսիսային Միջագետքը, Սիրիան, Փոքր Ասիան) գտնվում էին Հայկական պետության ազդեցության ոլորտում, ընդ որում այնքան ուժեղ, որ նույնիսկ Եգիպտական պետության դիցարանում մ. թ. ա. XV—XIII դդ. Թեշուրը խեթա-լուվիական դերագույն աստված Թարխունտասին հավասար պաշտվում էր։ Եվ այդքանից հետո ինչո՞ւ չհայտարարել, որ խուրրիները նույնպես (ինչպես ուրարտները) հայկական ժողովուրդ են եղել։

Անցնենք Արմանի-Հայաստան վարկածի հաջորդ փաստերին։ Իշխանյանը գրում է, որ հայ ցեղանունը հանդիպում է և՛ էբլայի տեքստերում (հալա ձևով), և՛ լուվիական արձանագրություններում (հայ ձևով)։ Այստեղ մեկնաբանության կարիք չկա, քանզի էբլայի հալա-ն ոչ թե ցեղանուն է, այլ անձնանուն, իսկ լուվիական արձանագրություններում հայ ցեղանունը վկայված չէ։ Այս երկու խումբ արձանագրություններում որպես հայ ժողովրդի էթնոնիմ (ցեղանուն) դիտվող բառերի նման մեկնաբանությունը հիմնված է հնացած, արդեն մերժված ընթերցումների վրա։

Սակայն վերադառնանք Իշխանյանի՝ հայ ժողովրդի կազմավորման և հնագույն պատմության հարցում որդեգրած «տեսությանը» և ամփոփենք դրա էությունը։ Նա գտնում է, որ հնդեվրոպական նախալեզվի տրոհումից կարճ ժամանակ անց (մ. թ. ա. III հազ.) Հայկական լեռնաշխարհը, «ազատվելով» մի քանի տասնյակ հնդեվրոպալեզու ցեղերից, արդեն մ. թ. ա. III հազ. երկրորդ կեսին հայալեզու է դառնում, որտեղ էլ ստեղծվում է հայկական Արմանի (=Հայք) պետությունը։ Հետագայում, արդեն մ. թ. ա. II հազ. կեսերից Արմանի—Հայքը սկսում է հիշատակվել խեթական աղբյուրներում՝ Հայասա, իսկ ասորեստանյան աղբյուրներում՝ Նաիրի ձևերով։ Այս Արմանի-Հայասա-Նաիրի պետությունը մ. թ. ա. IX դարում արդեն հայտնի էր ասորեստանցիներին Ուրարտու (ինքնանվանումը՝ Բիայնիլի) անվամբ, որն էլ մ. թ. ա. VI դարում վերջապես ազատվում է իր օտարածին անունից և ստանում իրեն հոգեհարազատ Հայք անվանումը (պարսկ. Արմինա, հուն. Արմենիա)։ Իսկ ինչ վերաբերում է Արմանի-Հայասա-Նաիրի-Ուրարտու-Հայքի էթնիկական կազմին, ապա Ռ. Իշխանյանը այդ ողջ ժամանակահատվածում մոտավորապես 300 000 քառ. կմ տարածքի վրա

[24] Հայ ժողովրդի ծագման..., էջ 46։

չի տեսնում որևէ ոչ-հայկական (այսինքն՝ հնդեվրոպալեզու, բայց ոչ-հայկական կամ այլալեզու) ժողովուրդ կամ ցեղ։ Նրա կարծիքով, լեռնաշխարհի բնակչությունը պարզապես միշտ էլ միատարր է եղել, սկսած հնդեվրոպական ցեղերի ցրվելու ժամանակաշրջանից։

Իսկ ինչ կարծիքի է անցյալի և այսօրվա գիտությունը, որը, ի տարբերություն Իշխանյանի կցկտուր փաստարկների, վերոհիշյալ հարցի հետազոտման համար հենվել է սեպագիր աղբյուրներում հիշատակվող տեղանունների, ցեղանունների և դիցանունների վրա, այսինքն՝ նրանք, ում փնտրում է Իշխանյանը։

Հայկական լեռնաշխարհի հնագույն շրջանով զբաղվող բազմաթիվ մասնագետները (Ն. Ագոնց, Գ. Ղափանցյան, Ա. Ղարիբյան, Գ. Ջահուկյան, Գ. Սարգսյան, Գ. Տիրացյան, Ն. Հարությունյան, Հ. Կարագյոզյան, Վ. Խաչատրյան, Մ. Խաչիկյան, Ս. Հմայակյան, Բ. Պիոտրովսկի, Ի. Դյակոնով, Գ. Մելիքիշվիլի, Ֆ. Լեման-Հաուպտ, Ա. Գյոթցե, Յ. Ֆրիդրիխ, Մ. Սալվինի, Ֆ. Հասզ, Գ. Վիլհելմ և այլք) փաստացի տվյալներով (գրավոր, լեզվական և հնագիտական) ապացուցել են մ. թ. ա. III—I հազ. Հայկական լեռնաշխարհի բնակչության բազմատարրությունը։ Տարբեր ժամանակներում տարբեր երկրներում ապրած տարբեր ազգեր ներկայացնող գիտնականների հիմնականում նույնանման կարծիքները ինքնին արդեն վկայում են այն մասին, որ «այս լեռնաշխարհում ինչ-որ Չհայաստան-Ուրարտուի գոյությունը» բացարձակապես հիմնավորված է, որ Իշխանյանի «բազմաթիվ փաստերն ու փաստարկները» գիտությանը լավ հայտնի տվյալներ են, որոնք ավելի են ամրապնդում ոչ միայն Ուրարտուի, այլև նրանից առաջ Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններում ոչ-հայկական ցեղերի գոյությունը, և որ Ուրարտու-Բիայնիլին Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցած քաղաքական միավորներից միայն մեկն էր, որի ժողովուրդը իր պետականության կորուստից հետո (գուցեև քիչ ավելի վաղ) ձուլվել է հզորացող հայ ժողովրդի մեջ։

Սակայն Իշխանյանը մասնագետներին մեղադրում է ոչ միայն նորագույն դիտական փաստերն անտեսելու մեջ, այլև մտավոր-տրամաբանական ունակություններ չունենալու մեջ։ «Այդ տեսության էությունը հետևյալն է. իբր մինչև մ. թ. ա. 590 թ. (585 թ.) եղել է «Ուրարտու», որտեղ ապրել են ինչ-որ «ուրարտացիներ», խոսել «ուրարտերեն», իսկ 590 թվականից միանգամից արդեն այլևս չկային «Ուրարտու», «ուրարտացի», «ուրարտական մշակույթ», այլ նույն տարածքում, ճիշտ նույն սահմանների մեջ արդեն կային Հայաստան, հայեր, հայերեն, հայկական մշակույթ և այլն. մայրաքաղաքն էլ նույն Վանն էր։ Իսկ այդ տարածքը ավելի քան 300 000 քառակուսի կիլոմետր է...»[25]։

Այս երկու նախադասության նպատակը մասնագիտական կարծիքների թերի, անթույլատրելիորեն աղավաղված պատկեր ներկայացնելն է։ Ի՞նչն է զարմացնում Իշխանյանին։ Որ Ուրարտուն կործանվել է մ. թ. ա. VI դարի սկզբին և նրա տեղում կազմավորվել է Հայկական պետություն Տոսպ-Վան մայրաքաղաքո՞վ։ Մի՞թե պետությունները անխախտ-անսասան են ի սկզբանե։ Պետականության անկման հետևանքով մի ժողովրդի քաղաքական գերիշխանությունը փոխարինվում է նույն տարածքի մի այլ ժողովրդի գերիշխանությամբ։ Օրինակներ որքան կամենաք։ Ինչ վերաբերում է Ուրարտուին, ապա այն ընկավ արտաքին թշնամիների՝ մարերի և սկյութների ու հայկական էթնոսի հարվածների շնորհիվ, իսկ քանի որ Ուրարտական լայնածավալ պետության տարածքի մի զգալի մասը զբաղեցնում էին հայկական ցեղերը, ապա հենց նրանք տեր դարձան կործանված պետությանը, այլ ոչ թե օտարները։ Այստեղ որևէ անտրամաբանական բան

25 Նույն տեղում, էջ 52։

չկա, ինչը կարելի է ասել Իշխանյանի կարծիքը «հիմնավորող» հետևյալ «փաստարկի» մասին։

Նրա կարծիքով, ողջ Հայկական լեռնաշխարհը իր 300 000 քառ. կմ տարածքով պետք է մի էթնիկական ամբողջություն կազմեր։ Եվ քանի որ դիտնականները այս տարածքը մ. թ. ա. IX—VII դդ. անվանում են Ուրարտու, ուրեմն նրանք այստեղ չեն տեսնում որևէ այլ ժողովուրդ, բացի ուրարտներից։ Սա բացահայտ կեղծիք է։ Երբեք ոչ մի մասնագետ, լինի դա օտար թե հայ, նման բան չի ասել։ Ընդհակառակը, ցանկացած մասնագիտական հրատարակության մեջ պարզից պարզ գրված է, որ նախապես Վանա և Ուրմիա լճերի միջև և որոշ հարակից տարածքներում ամփոփվող Ուրարտուն մ. թ. ա. IX դարի վերջին քառորդից սկսում է ակտիվ նվաճողական քաղաքականություն վարել, որի հետևանքով արդեն մ. թ. ա. VIII դարի կեսերին Հայկական լեռնաշխարհը ամբողջությամբ ընկնում է Ուրարտական պետության ազդեցության տակ։ Ուրարտական արձանագրություններում վկայված նվաճված շրջանների տեղանունների և անձնանունների ուսումնասիրությունը խոսում է այն մասին, որ դրանք ծագումով ուրարտական չեն։ Ավելին, նույն տարածքների հնագիտական ուսումնասիրության շնորհիվ ապացուցված է, որ տեղական մշակույթը (կամ մշակույթները) ամենևին ուրարտական չեն։ Ի՞նչ կարող է նշանակել վերոհիշյալը։ Պատասխանը միանշանակ է. ողջ Հայկական լեռնաշխարհը մինչև մ. թ. ա. 590 թ. (և նույնիսկ շատ ավելի ուշ) միատարր չի եղել, 300 000 քառ. կմ տարածքում միայն ուրարտներ չեն ապրել։ Մինչդեռ Իշխանյանը միտումնավոր կերպով Ուրարտու պետության քաղաքական միասնությունը նույնացնում է էթնիկական և մշակութային միասնության հետ։ Ոչ մի մասնագետ այսպիսի բան չի ասել և չէր էլ կարող ասել, քանի որ Հին Արևելքում (նաև ավելի ուշ ժամանակներում) միատարր էթնոմշակութային քաղաքական միավորներ չեն եղել (խոսքը շատ թե քիչ խոշոր պետությունների մասին է, և Ուրարտուն բացառություն չէր)։ Ասվածի լավագույն ապացույցը հետևյալ տողերն են. «...արդեն Ուրարտական պետության գոյության շրջանում նրա տարածքը, ներառյալ նաև ուրարտական ցեղերի բնօրրանը՝ Վանա լճի ավազանը, հայացվեց։ Այդպիսով, իր գոյության վերջում Ուրարտական պետությունը զրկվեց որևէ սոցիալ-էթնիկական հիմքից և կործանվեց, ճանապարհ բացելով Հայկական լեռնաշխարհում արդեն էթնիկապես գերիշխող հայ ժողովրդի՝ առաջին համահայկական պետության մեջ քաղաքական ձևավորման համար»[26]։

Այս պարզ և համառոտ ամփոփումը կարծես տեղ չի թողնում Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքում ինչ-որ կարծեցյալ էթնոմշակութային միատարրության (հայկական կամ ուրարտական) մասին ենթադրության համար, սակայն ով գիտի, գուցե դեռ կգտնվեն համանման մեղադրանքներ։

Այժմ անդրադառնանք Իշխանյանի հաջորդ, թերևս ամենափայփայվող «փաստարկին»՝ ուրարտերեն լեզվի ներմուծովի բնույթին։ Ըստ այդ տեսակետի, Ուրարտուի պաշտոնական, դրագրային լեզուն գրի հետ միասին փոխառվել է «Արարատյան թագավորության» (այսինքն՝ Ուրարտուի) բնակիչների (այսինքն՝ հայերի) կողմից, այնպես, ինչպես հետագայում Հայաստանում կիրառվում էին արամեերենը, ասորերենը, հունարենը, լատիներենը։ Սա, իհարկե, տարբերվում է այն «մասնագետների» կարծիքից, ովքեր ուրարտերենը ընթերցում էին և այժմ էլ ընթերցում են հայերեն և այն անվանում հայերենի Վանի բարբառ։ Ի՞նչ կարելի է ասել «ներմուծովի» փաստարկի մասին։

---

[26] Գ. Խ. Սարգսյան. Ուրարտական տերությունը և հայերը.—Բ. Ն. Առաքելյան, Գ. Խ. Սարգսյան, Գ. Բ. Ջահուկյան. Ուրարտու—Հայաստան, խմբ. Է. Բ. Աղայան. Երևան, 1988, էջ 126։

Տողերիս հեղինակը մի այլ կապակցությամբ նշել է[27], որ որևէ լեզվի կամ դրի ներմուծումը և կիրառումը հնարավոր է միայն հարակից երկրներում դրանց գոյության և նույնիսկ ավելին՝ միջազգային կարգավիճակի դեպքում։ Սակայն համայն Մերձավոր Արևելքում ուրարտուից բացի այլևս ոչ մի տեղ վկայված չեն ո՛չ ուրարտերեն լեզուն, ո՛չ էլ միջագետքյան սեպագրի ուրարտական տարբերակը՝ իրեն հատուկ իմաստային նշանակության համակարգով։ Եթե Իշխանյանը կարողանար ապացուցել այդպիսի աղբյուրի գոյությունը (իհարկե, ոչ իրեն հատուկ «փաստ ու փաստարկով», այլ դիտականորեն), ապա դրանով իսկապես շոշափելի հարված կհասցներ Ուրարտուին և ուրարտներին։ Սակայն, բարեբախտաբար թե դժբախտաբար, ուրարտերեն լեզուն և ուրարտական սեպագիրը Տուշպա-Վանի մենաշնորհն է, և դրա ներմուծվի բնույթի մասին Իշխանյանի փաստարկը, ի թիվս շատ այլ «փաստարկների», սին է։

Ռ. Իշխանյանը ուրարտերենի ներմուծման աղբյուրի բացակայությունը փորձում է լրացնել պատմական անալոգիայի (զուգադրության) օգնությամբ։ Տեսնենք, թե ինչ է ներկայացնում իրենից այս փաստարկը։ Վկայակոչվում է, մասնավորապես, ամերիկյան նշանավոր հնագետ Լեո Օպպենհայմի արտահայտած միտքն այն մասին, թե գրավոր աղբյուրները վստահելի վկայություն չեն տալիս տվյալ հասարակության լեզվական կազմի վերաբերյալ[28]։

Ենթատեքստից կտրված յուրաքանչյուր միտք անբարեխիղճ օգտագործման դեպքում կարելի է ծառայեցնել ցանկացած նպատակի։ Լ. Օպպենհայմը նկատի ունի հետևյալը. սկսած մ. թ. ա. III հազ., Միջագետքը եղել է տարբեր ժողովուրդների ներհոսքի օբյեկտ, որոնց մեծ մասը, լինելով սեմական խոշոր լեզվաընտանիքի տարբեր ճյուղերի ներկայացուցիչներ, գրավոր աղբյուրներում հստակորեն չեն տարբերակվում։ Այսինքն, մ. թ. ա. III—I հազ. Միջագետքում արձանագրությունները գրվել են սկզբում շումերերեն, այնուհետև՝ աքքադերեն, սակայն տարբեր ժամանակահատվածներում այստեղ բնակվել են նաև մեծ թվով այլ ժողովուրդներ ու ցեղեր՝ խուրրիներ, ամորեյներ, կուտիներ, կասսիտներ, բազմաթիվ արամեական ցեղեր։ Սակայն մի՞թե Լ. Օպպենհայմի նշված տեսակետից կարելի է եզրակացնել, թե շումերերեն և աքքադերեն լեզուները Միջագետքի բնակչությանը խորթ են եղել, ներմուծվի են։ Իհարկե, ոչ։ Եթե Լ. Օպպենհայմի միտքը կիրառենք Հայկական լեռնաշխարհի նկատմամբ, ապա, կարծում եմ, հազիվ թե Իշխանյանը գոհ մնա այս հեղինակին վկայակոչելուց։ Այսպես, եթե Տուշպայի լեզուն նախապես հայերենը չի եղել, այլ ուրարտերենը, ապա կստացվի, որ հայերը ուրարտներից ավելի ուշ են հայտնվել Վանա լճի ավազանում և, չնայած այստեղ քանակապես գերակշռել են, այնուամենայնիվ ուրարտական (կամ հայկական) գրիչները ավանդաբար շարունակել են գրել ուրարտերեն։

Չխորհելով Լ. Օպպենհայմի մտքի էության մեջ (գուցե միտումնավոր կերպով), Ռ. Իշխանյանը այնուհետև շարունակում է. «Սա ունի շատ ապացույցներ. օրինակ, երկար ժամանակ Պարսկաստանում պետական լեզու է եղել էլամերենը և պարսիկները գրում էին էլամերեն։ Կամ. շումերները իսպառ վերացել են II հազարամյակի սկզբներին, բայց աքքադացիները, քաղդեացիները և այլ ժողովուրդներ շումերերենը օգտագործում էին գրավոր արձանագրություններում ...։ Արամեերենը մ. թ. ա. VI դարից Պարսից Աքեմենյան կայսրության պետական լեզուն էր, թեև բնակչության մեծ մասն այն չգիտեր։ Փոքր Ասիայի արևմուտքում մ. թ. ա. II հազարամյակում կար Արծավա երկիրը՝ հունական բնակչությամբ, արձանագրությունները խեթերեն են։ Նույն ժամանակաշրջանում Միջագետքի Մի-

27 «Փյունիկ» շաբաթաթերթ, 1990, № 8։

28 Հայ ժողովրդի ծագման..., էջ 62—63։

ատանի երկիր-պետության բնակչության հիմնական մասը հնդկական էր, թագավորները նույնպես, բայց արձանագրությունները գրվել են խուռիերեն և աքքադերեն ... հին խեթական պետության (մ. թ. ա. XIX—XVI դդ.) ատրեծքում, ինչպես վերն ասվեց, գտնվել են աքքադերեն արձանագրություններ, բայց երկրում տեղի ժողովուրդը այդ լեզվով չի խոսել Հայաստանում գրվել են նաև լուվիերեն արձանագրություններ»[29]։

Հոլված մի քանի հոդվածներ ակնհայտորեն նախատեսված է աշ մոտակայքի համար և վկայում է հինարևելյան ժողովուրդների և պետությունների պատմության վերաբերյալ լեզվագիտական [illegible] գիտելիքների մասին։

Ն. Ինչպես հայտնի է, որ Նյամպիները Պարսկաստանում ստար ժողովուրդ էին (նրանք գտնվում էր Պարսկաստանի հարավում՝ Պարսից ծոցի շրջանում), և որ նրանց մայրաքաղաքը նույն Աքեմենյան պետության Շուշ (Սուսա) մայրաքաղաքն էր, այսինքն, Աքեմենյան Պարսկաստանը զգալի չափով ելույթ երկրաշարժության պետականության հանդիսանում էր, որ Նյամպիներից բացի, պարթևները գրում էին նաև պարսկերեն։

Ինչ վերաբերում է շումերերենի գոյատևման խնդրին, ապա վատ չէր լինի հիշել, որ մ. թ. ա. IV—I հազ. Մերձավոր Արևելքի ժողովուրդները քաջ [illegible] էին և արծարձել էին մասնագետ սեպագրի հայանագրողներին՝ շումերներին։ Վերջիններիս՝ աքքադացիների մեջ ձուլվելուց հետո շումերերենը կիրառվում էր միայն որոշակի ընդգծվառներում (գրական, պաշտամունքային տեքստ ժողովրդում, որպես ուսուցողական ձեռնարկների լեզու՝ գրիչների դպրոցներում), իսկ պետական պաշտոնական գրագրության լեզուն աքքադերենն էր։

Արամեերենը Աքեմենյան լայնածավալ պետության ամենակիրառական լեզուն էր, որովհետև արամեացիները տարածված էին կայսրության բազմաթիվ շրջաններում, որովհետև նրանց գիրը բարդ սեպագրի համեմատությամբ ավելի հեշտ էր յուրացվում և գրվում-ընթերցվում. արամերենը միջազգային լեզու էր, որը աքքադերենի (և սեպագրի) աստիճանաբար [illegible] [illegible] մի [illegible] [illegible] կարգավիճակ ուներ։

Արձանագրի (Հարավ-արևմտյան Փոքր Ասիայում) բնակիչները ամենևին [illegible] [illegible] էին, այլ մի խեթա-լուվիական ժողովուրդ, որը մ. թ. ա. I հազ. ստեղծեց Լիկիա պետությունը։ Իսկ խեթերեն և աքքադերեն արձանագրությունները գրում էին այն դարը դարձառով, որ նրանց՝ մեզ հասած արձանագրությունները [illegible], ուղղված խեթական արքաներին և [illegible] փարավոններին։ [illegible] զարմանալի կլիներ, եթե խեթերից կախյալ [illegible] պետության արքան ժամանակի խոշոր տերությունների նամակներ առներ իր մայրենի լեզվով (սա նույնն է, եթե Ցակուտիայից յակուտերեն գրված պաշտոնական գրություն ուղարկվեր Մոսկվա)։

Միտանիներները յուրաքանչյուր մասնագետին լավ հայտնի խուռիներն էին. ուղղակի Մինտաննիի կառավարող թագավորական դինաստիան, դատելով թագավորների անուններից, հնդարիական ծագում ուներ։ Խեթական Հին թագավորության շրջանում որոշ պաշտոնական և գրական ժանրի արձանագրություններ իսկապես գրվել են աքքադերեն, բայց չէ՞ որ արձանագրությունների մեծ մասը գրված է խեթերենով, այսինքն՝ տեղաբնիկ ժողովրդի լեզվով։

Եթե, մեզ մի միայն Հայաստանում լուվիերենի [illegible] հասած։ Հայաստանում երբեմն լուվիերեն չի գրվել, սակայն լուվիերեն գրվել է Հայկական լեռնաշխարհի արևմուտքում մ. թ. ա. XII—VII դդ. գոյություն ունեցած լուվիական Մելիդ պետությունում (ժամ. Մալաթիայի շրջանում)։

Վերոհիշյալը միանշանակ վկայում է այն մասին, որ նշված բոլոր եր-

[29] Նույն տեղում, էջ 63։

կրոններում պաշտոնական գրագրային լեզուն (կամ լեզուները) այդ պետությունների համար օտար, ներմուծովի չեն եղել. այլ բան է, երբ կիրառվել են եռև այլ լեզուներ, որի բացատրությունը վերը տրվեց։

Ահա սա է Ռ. Իշխանյանի «փաստ ու փաստարկներից» ևս մեկի էությունը։ Եթե հայ ժողովրդի կազմավորման և հնագույն պատմության իշխանյանական «տեսությունը» դիտարկենք նրա օգտագործած «փաստերի ու փաստարկների» գիտական արժանահավատության (ավելի ճիշտ՝ անարժանահավատության) տեսանկյունից, ապա այդ «տեսությունից» ոչինչ չի մնա։ Սակայն սեփական կարծիքը ֆետիշացնելու և ընդդիմախոսներին ամեն գնով հակառակվելու մոլուցքը Իշխանյանին դրդում են գնալ բացահայտ կեղծիքի. «Մեր ուրարտասերները կամ ուրարտամոլները բերված որևէ փաստի ու փաստարկին չեն պատասխանում, իրենք էլ հօգուտ իրենց եկվորա-ուրարտական տեսակետի ոչ մի փաստ ու փաստարկ չեն բերում...»[30]։

Ինչպե՞ս կարելի է թաքցնել այն փաստը, որ «ուրարտամերժների» դեմ գրել ու բանավոր ելույթներ են ունեցել այնպիսի ճանաչված գիտնականներ, ինչպիսիք են Գ. Սարգսյանը, Բ. Առաքելյանը, Գ. Ջահուկյանը, Էդ. Աղայանը, Ն. Հարությունյանը, Գ. Տիրացյանը, Գ. Արեշյանը, Կ. Ղաֆադարյանը, Ս. Եսայանը, Մ. Իսրայելյանը, Ս. Հմայակյանը, Հ. Մարտիրոսյանը, Կ. Հովհաննիսյանը և ուրիշներ։ Ինչո՞ւ է թաքցվում նաև այն, որ «ուրարտասերներ», «ուրարտամոլներ» են եղել մեր դասական հայագիտության այնպիսի փայլուն ներկայացուցիչներ, ինչպիսիք են Ն. Ադոնցը, Հ. Աճառյանը, Մ. Արեղյանը, Գ. Ղափանցյանը, Հ. Օրբելին, իսկ ռուսական նշանավոր արևելագետներից՝ Ն. Մառը, Ի. Մեշչանինովը և ուրիշներ։ Ոչ մի խոսք չի ասվում արևմտաեվրոպական ժամանակակից հայտնի ուրարտագետների բազմաթիվ արժեքավոր աշխատությունների մասին։ «Ուրարտամերժներին», իհարկե, ձեռնտու է թաքցնել այս բոլորը։

Հայ ժողովրդի կազմավորման խնդրին առնչվող շատ հարցեր դեռ մութ են, որ կապված է անհրաժեշտ սկզբնաղբյուրների սակավության հետ։ Գիտնականի և ոչ-գիտնականի գործելակերպի տարբերությունը այն է, որ առաջինը որևէ տեսություն կամ վարկած առաջարկելիս մտահոգվում է դրա գիտական հիմնավորվածությամբ, երկրորդի համար չափանիշներն այլ են։ Իսկական գիտության մեջ տեղ չունի «նպատակն արդարացնում է միջոցները» սկզբունքը։ Ամեն գնով ցանկացածն ապացուցելու միտումը կարող է վարկաբեկել և որակազրկել յուրաքանչյուր գիտական աշխատանք։ Ճշմարիտ գիտությունը պետք է հենվի միայն ու միայն գիտական փաստերի վրա, ՝այլապես այն կդադարի գիտություն կոչվել։ Վերջին հաշվով ի՞նչ անպատվաբեր բան կա հայ ժողովրդի համար, եթե հինարևելյան գրավոր և նյութական հուշարձանների ուսումնասիրության շնորհիվ պարզվում է, որ նրա կազմավորման գործին մասնակցել են նաև Հին Արևելքի մի շարք քաղաքակիրթ ժողովուրդներ (խուրրի-ուրարտներ, խեթեր, լուվիացիներ)։

«Այդ հեղինակները (Իշխանյանը և մյուսները—Ա. Ք.) աներևակայելի շռայլությամբ հրաժարվում են իրենց իսկ նախնիների կողմից իրենց իսկ հայրենիքում ստեղծած մեծ քաղաքակրթությունների ժառանգությունից միայն այն պատճառով, որ նրանք դեռևս հայերեն չէին խոսում։ Իսկ ես և իմ տեսակետին հետևողները հայ ժողովրդին համարում ենք և՛ նախահայերի, և՛ Հայկական լեռնաշխարհում հինարևելյան մեծ քաղաքակրթությունների ստեղծողների հետնորդներ ու մշակութային ժառանգորդներ։ Այդ մշակույթները իրավամբ հայ ժողովրդի ժառանգությունն են։ Այդպիսի ժառանգությամբ ամեն ժողովուրդ չէ, որ կարող է հպարտանալ և մեծ շռայլություն կլիներ հրաժարվել դրանից»[31]։ Ի դեպ, այս տողերը պատկանում են

30 «Հայաստանի Հանրապետություն», 17 մայիսի 1991։

31 И. М. Дьяконов. Указ. соч., с. 178.

մեր ժամանակների մի խոշոր գիտնականի, ով արդեն երկար տարիներ Ռ. Իշխանյանի հոդվածների հիմնական թիրախներից է։

Վերջացնեմ հոդվածս հետևյալ եզրակացությամբ.

Գիտությունը խաղալիք չէ, որպեսզի այն կարելի լինի շրջել-պատել ցանկացած ձևով։ Դիլետանտիզմը (սիրողականությունը) պետք է վճռականորեն մերժվի ինչպես հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում, այնպես էլ գիտության հարցերում։

НАУКА ИЛИ ДИЛЕТАНТИЗМ

А. В. КОСЯН

Резюме

В последние годы филолог Р. Ишханян взял на свои плечи нелегкий груз решения весьма сложной проблемы этногенеза армянского народа. В своих многочисленных поверхностных, а иногда просто полуграмотных статьях он «разносит в пух и прах» всех крупных ученых, специалистов древней истории. Характерно, что абсолютное незнание столь необходимых при исследовании предыстории армянского народа древневосточных языков и систем письма, а также отсутствие научной методики нисколько не смущают его. Чтобы подкрепить свою главную «теорию» о том, что урарты те же армяне, Р. Ишханян либо ссылается на абсолютно ненаучные «источники», либо фальсифицирует их. В итоге получаются не научные заключения, а дилетантские заблуждения.

Խմբագրության կողմից. «Հանդեսի» նախորդ համարում տպագրելով պատմաբան Մ. Կատվալյանի քննադատական հոդվածը լեզվաբան Ռ. Իշխանյանի «Պատկերազարդ պատմություն հայոց» գրքույկի մասին, որոշել էինք այլևս չանդրադառնալ վերջինիս «պատմագիտական» մարգարտներին։ Բայց քանի որ Իշխանյանը, սկսելով նոր հարձակումներ իր ընդդիմախոսների վրա համառորեն շարունակում է աղավաղել մեր պատմությունը, հարկ համարեցինք հրապարակել նաև պատմաբան Ա. Քոսյանի սույն հոդվածը։